Լեռ Կամսար

Մանրապատում

Ուրբաթ օրվա պառլամենտի նիստին պատգամավոր Ազատյանը չխոսեց: Պատճառը անհայտ է:

Վերջերս հայկական կառավարությունը Թիֆլիսեն ստացավ վագոն մը պաշտոնյա ու մոտ օրերս պիտի բաժանվի ազգաբնակչության վրա:

Քաղաքիս աղքատները ամսի 18-ին հետևյալ գրություն են ուղղեր կառավարության. «Մենք, մայրաքաղաքիս քսանութ հազար աղքատներս, ի նկատի ունենալով, որ օրական մեկ ֆունտ կարտոֆիլով և 60 կոպեկով չենք կշտանար և օրերով անոթի կանցուցնենք, կխնդրենք ետ վերցնեք նպաստի գրքույկները և փոխարեն մեզ ուտելու պաշտոն տաք համապատասխան պաշտոնատանց մեջ:

Որովհետև դրամի կուրսը ինկած է, կոպեկով ու շահիով ոչինչ կարելի է գնել, այդ պատճառով մուրացկանները պատի տակեն կպոռան. «Ողորմությո՛ւն, ողորմացե՛ք, անտեր մայիֆ աղքատ եմ, մեկ պաշտոն տվեք...»:

Խեղճ, ողորմելի մուրացկաններ... մարդուս սիրտը կտոր-կտոր կըլլա... կմտածես՝ ծո, ախպար, մարդս այնքան թշվառ ըլլա այս քաղաքի մեջ, որ մեկ պաշտո՞ն ալ չունենա:

Խոլերայի դեմ կռվող վարչությունը գրությամբ մը ծանուցանելով խոլերայի վերացման մասին՝ գլխավոր բժիշկեն խնդրեր է պաշտոնեությունը պարապ չձգելու համար ուրիշ հիվանդություն մը հայտարարել քաղաքին համար:

Բժիշկը հարգելով ծառայողներուն խնդիրքը՝ քաղաքս բծավոր տիֆի վտանգի տակ է հայտարարած: Երեկվնե սկսյալ քաղաքիս բոլոր հիվանդները բծավոր տիֆե կմեռնին:

Լսելով պարենավորման կոմիտեի խոստումը եկող ամսեն հացը կես ֆունտ բարձրացնելու մասին՝ քաղաքիս երիտասարդները ամուսնանալու ձեռնարկներ կընեն, իսկ ամուսնացածները կպատրաստվին սկսել ընդհատված որդեծնությունը:

Այս ծանրակշիռ պարագան ի նկատի ունենալով՝ կառաջարկեի հիշյալ կոմիտեին անգամ մըն ալ մտածել. եթե չի կրնար իր խոստումը ի կատար ածել, թող զուր խոստումներ չընե, հակառակ պարագային հազարավոր նոր որբերու և այրիներու հայտնության դուռ բանա պիտի:

1918թ.